ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ, ՈՐԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՆԵՐՍԻՑ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԳՈՐԾՔ 1.1-8

*1 Առաջին գիրքը, որ գրեցի, այն ամենի մասին էր, ո՛վ
Թեոփիլե, ինչ Հիսուսը սկզբից արեց և ուսուցանեց 2
մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով իր ընտրյալ
առաքյալներին պատվիրեց և համբարձվեց, 3 որոնց
իսկ իր չարչարանքներից հետո բազում
ապացույցներով կենդանի ներկայանալով՝ քառասուն
օրերի ընթացքում հայտնվեց նրանց և Աստծու
արքայության մասին խոսեց: 4 Որքան ժամանակ որ
միասին էին, Հիսուսը նրանց պատվիրում էր.
Չհեռանա՛ք Երուսաղեմից, այլ Հոր խոստմա՛նը
սպասեք, ինչպես որ ինձանից լսեցիք. 5 որովհետև
չնայած Հովհաննեսը մկրտում էր ջրով, իսկ դուք
սրանից ոչ շատ օրեր հետո կմկրտվեք Սուրբ Հոգով:*

***6 Աշակերտներն իրար միացան և նրան հարցրին՝
ասելով. Տե՛ր, այս ժամանա՞կ ես Իսրայելի
թագավորությունը վերահաստատելու:***

*7 Եվ Հիսուսն ասաց նրանց. Ձեր գործը չէ <u>ժամերն</u> ու
<u>ժամանակներն</u> իմանալը, որ Հայրն իր իշխանությամբ
սահմանեց: 8 Բայց դուք զորություն կստանաք, երբ
Հոգին ձեզ վրա գա, և իմ վկաները կլինեք
Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու
Սամարիայում, մինչև աշխարհի ծայրերը:*

«Տեր, այս ժամանակո՞ւմ ես վերականգնելու Իսրայելի թագավորությունը»:

ՃԻՇՏ ՀԱՐՑ, ԲԱՅՑ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Նրանք սխալ չէին: Նրանք սպասում էին՝

Ազգային վերականգնման

Քաղաքական ազատության

Տեսանելի հաղթանակի

- *Նրանք տեսել էին խաչը... տեսել էին հարությունը... Եվ հիմա սպասում էին* ***վերականգնման****:*
- *Անկեղծորեն՝ մենք էլ ենք նույնը ուզում: Այսօր մարդիկ նույն հարցն են տալիս.*

  «Կվերականգնվի՞ իմ առողջությունը»

  «Կվերականգնվի՞ իմ ֆինանսները»

  «Կվերականգնվի՞ իմ ընտանիքը»

  բայց հաճախ, ինչպես աշակերտները, մենք վերականգնումը սահմանափակում ենք միայն տեսանելիով:

Հիսուսը անում է մի անսպասելի բան.

- ***Փոխում է ուշադրության ուղղությունը դեպի վերականգնումը, որը սկսվում է ներսից:***

Ղուկաս 17.21 – որովհետև ահա Աստծու արքայությունը հենց ձեր ներսում է:

1. ԱՍՏՎԱԾ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ԻՐ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՆԵՐՍՈՒՄ

Ես սա անվանում եմ «անտեսանելի արքայություն»:

*Հովհաննես 3.3-6 – **3** Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. եթե մեկը վերստին չծնվի, Աստծու արքայությունը չի կարող տեսնել»:*

*__4__ Նիկոդեմոսը նրան ասաց. Ինչպե՞ս կարող է ծնվել մի մարդ, որ ծեր է. մի՞թե կարող է երկրորդ անգամ իր մոր որովայնը մտնել ու ծնվել: __5__ Հիսուսը պատասխանեց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ. եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, նա չի կարող մտնել Աստծու արքայությունը: __6__ Մարմնից ծնվածը մարմին է, իսկ **Հոգուց ծնվածը՝ հոգի**:*

Հռ.14.17 – Որովհետև Աստծու արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ արդարություն, խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգով:

2. ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՆԵՐՍԻՑ ԴԵՊԻ ԴՈՒՐՍ (UPSIDE DOWN KINGDOM)

*8 Բայց դուք **զորություն կստանաք**, երբ Հոգին ձեզ վրա գա, և **իմ վկաները կլինեք** Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում, մինչև աշխարհի ծայրերը:*

*Գործք Առաքելոց 4.13 – Եվ Պետրոսի ու Հովհաննեսի **համարձակությունը** տեսնելով և հասկանալով, որ անուսում ու տգետ մարդիկ են, զարմացած էին, որովհետև նրանց ճանաչում էին իբրև Հիսուսի հետևորդների:*

- *Վախկոտ աշակերտները դարձան համարձակ վկաներ...*

Գործք Առաքելոց 17.6 – Սրանք, որ աշխարհը տակնուվրա են արել, այստեղ էլ են հասել:

Եսայի 49.6 – ես քեզ նաև ազգերի համար լույս կդարձնեմ, որպեսզի իմ փրկությունը հասնի մինչև երկրի ծայրերը:

Ավետարանը սկսվեց Երուսաղեմից

Հասավ մինչև երկրի ծայրերը

և այսօր վերադառնում է դեպի իր սկզբնակետը

ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՎՐԱ Է ՀԱՍՏԱՏՎՈՒՄ

*Գործք 1.11– Ո՛վ գալիլեացիներ, ի՞նչ եք կանգնել ու երկինք նայում: Այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք համբարձվեց, **նույն կերպ էլ պիտի գա**, ինչպես որ նրան տեսաք երկինք գնալիս:*

*Խնդրում եմ կողքինիդ ասա. **նույն կերպ էլ պիտի գա***

Տեր Հիսուս գնաց երկինքը,

Ամպերով Նա շուտ պիտի վերադառնա,

Ամպերով Նա պիտի գա, (2)

Ամպերով Նա շուտ պիտի վերադառնա:

Ալելուիա՜ (2), Հիսուս շուտով պիտի գա, պիտի գա,

Ալելուիա՜ (2), Հիսուս փառքով պիտի գա:

Հարցը սա է՝ որտեղ է Նա գալու

ՆԱ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ Է ՆՈՒՅՆ ՏԵՂԸ՝ ԶԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԸ

Զաքարիա 14.4 – Այդ օրը նրա ոտքերը կանգնած կլինեն Զիթենյաց լեռան վրա, որ Երուսաղեմի դիմաց է դեպի արևելք: Եվ Զիթենյաց լեռը միջից կպատռվի դեպի արևելք և արևմուտք. խիստ մեծ հովիտ կլինի, և սարի կեսը կքաշվի դեպի հյուսիս, իսկ կեսը՝ դեպի հարավ:

Որտեղ: Երուսաղեմում՝ իր խոստման կատարման վայրում:

*Ամովս 9.11-12 – **11** Այդ օրը պիտի կանգնեցնեմ Դավթի ընկած տաղավարը և պիտի նորոգեմ նրա ճեղքերը, պիտի վերականգնեմ և այն պիտի վերակառուցեմ վաղեմի օրերի պես, **12** որպեսզի նրանք տիրանան Եդովմի մնացորդին և այն բոլոր ազգերին, որոնք կոչվում են իմ անունովե,- ասում է Տերը, որ այս բաներն է անում:*

- *Ահա ճիշտ հարցի ամբողջական պատկերը՝ իր լիակատար բացահայտմամբ:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: